ճէչ եւ ի Բերկրի եւ ի Վան եւ յամենայն զաւառս նոցա արար այնպէս ... Եւ ժողովեալ զամենայն գերեալսն եւ հօրանս անդէոց եւ ջոկս ոչխարաց եւ երամակս ձիոց, իբրեւ մեծ եւ յորդեալ հեղեղ, զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին յԵրեւան, ի լիութիւն բանակին պարսից ... որով գերեցան այսքան անձինք քրիստոնէից, զորոց թիւն ԻԳՌ (23,000) ասեն զոլ, թող զսպանեալսն» (Դաւր. Գ. եր. 33):

Նոյն այս ձեւով աւերեցին եւ ամայացրին պարսիկները «սկսեալ ի սահմանացն Նախջուանու եւ անցեալ ընդ Եղէգաձոր, առ եկերբ Գեղամայ, եւ Լօռոյ եւ զՀամզաշիման զաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակաւան, զՋարիչատ եւ մասն ինչ ի գիւղօրէիցն Կարսայ եւ զձորն Կաղզվանու բնաւին, եւ բովանդակ զերկիրն Այաշկերտու եւ զգեղօրայսն Մակուայ եւ զերկիրն Աղբակու եւ զՍալմաստու եւ զՈրայ եւ զՈրմի եւ որ ինչ պանդուխտք եւ զարիպականք մնացեալք էին ի քաղաքն եւ ի գեղօրայսն Թարվիզու, զդաշտն Արարատու բովանդակ, եւ զԵրեւան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ, զՄաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն: Եւ յառաջ քան այս, զդաւառն Կարնոյ եւ զԲասենու եւ զՄնուսայ եւ զՄանազկերտու եւ զԱրծկէոյ եւ զԱրճիշոյ եւ զԲերկրու եւ զՎանայ, աւարաւ եւ գերութեամբ բերեալ էին յԵրեւան եւ ընդ սոսա քշեցին եւ տարան» (Դաւր. Դ. 52–53):

Բայց աղէտը միայն այսքանը չէր: Պատերազմների ընթացքում եւ պատերազմներից յետոյ՝ միշտ էլ գլուխ էր բարձրացնում անիշխանութիւնը, ժողովրդի ամենակատաղի թշնամին: Թէեւ այն էլ պիտի ասել, որ անիշխանութիւնը պարսիկ եւ տաճիկ տիրապետութեան անբաժան ընկերն է եւ միշտ էլ եղել է, նոյն իսկ ամենախաղաղ ժամանակներում: Սակայն պատերազմի ժամանակ եւ պատերազմից անմիջապէս յետոյ նա աւելի սանձարձակ էր դառնում: Այս կամ այն աւազակ ցեղերը, այս կամ այն աւազակ անհատները, օգտուելով պատերազմից եւ երկրի խառնակ վիճակից, հաստատւում էին որեւէ մի տեղում եւ ասպատակ սփռում ամէն կողմ: Պատերազմի պակաս թողածը նրանք էին լրացնում: Աւերում, կողոպտում, կոտորում, տակն ու վրայ էին անում ո՛չ միայն իրենց բնակած գաւառում, այլ յաճախ նաեւ երկրի մի ծայրից միւսն անցնելով:

Զմոռանանք այն էլ աւելացնել, որ իւրաքանչիւր պատերազմից կամ նման ասպատակութիւնից յետոյ՝ ամէն անգամ դալիս էր համատարած սովը, իր անբաժան ընկեր վարակիչ հիւանդութիւնների հետ միասին, եւ մարդկային անհամար կեանքեր հնձում: Պատճառները հասկանալի են:

Մի քանի զարհուրելի սովերի նկարագրութիւն ունի Դաւրիժեցին, ըստ որում մարդիկ ուտում էին ո՛չ միայն բոլոր «անասուրբ» կենդանիներին — շուն, կատու, ձի, էշ եւայլն — այլ անգամ մեռելներին եւ կենդանի մարդկանց: Նոյն իսկ կանայք 3–4 հոգով միաբանում էին իրար հետ եւ դուրս գալիս մարդիկ որսալու. խարում էին պատահած մարդուն, քաշում բերում էին ներս եւ մորթում — ուտում: Դեռ աւելի. անգամ ծնողները սպանում էին իրենց զաւակներին եւ ուտում (Դաւր. Գլ. Է. եր. 88–91):

Մէկ խօսքով՝ զրութիւնը ծայր աստիճան յուսահատական էր: Գրիգոր Արեղան ազալով իր դառն ժամանակները, ասում է. «Անբարի ժամանակի վիճակեցաք. չորրորդ մասն աշխարհիս ապականեալ է ի բազում հինից այլազգեայ: Անտէրունջ է ամենայն աշխարհ. ամենեքեան իբրեւ ոչխարք մոլորեալք, որոց ոչ հովիւ է տածիչ եւ ոչ մխիթարութիւն ուստեք եւ ոչ՝ որ ժողովէ զցրուեալս ի մի. յամենայն կողմանց նեղութիւն պատեալ է զմեզ. եւ ահա վճարեալ է բանն Եսայեայ, ահ, գուբ եւ որոգայթ ի վերայ ձեր, բնակիչք երկրի». «Զամչեան Գ. 536):

Բայց երանի՜ Հայաստանի եւ հայ ժողովրդի դժբախտութիւնը միայն այդքանը լինէր — պատերազմներից, սովից եւ զանազան աւազակ իշխանաւորներից: Դա դոնէ պատահական մի բան կը լինէր եւ չէր ունենայ տեւական բնոյթ: Այն ինչ հայ ժողովրդի աւելի մեծ դժբախտութիւնն այն էր, որ նա ենթակայ էր մշտական եւ արդէն պետական սիստեմ դարձած վայրագութիւնների՝ կառավարութեան եւ նրա մանր ու մեծ պաշտօնեաների կողմից —